

9.

Սարգիս Եղղոկիա փոխանորդ կը դնէ եւ տարիէ մը կը հրաժարի. Կ.Պոլսոյ ամէն եկեղեցիներու մէջ քարոզ կու տայ: Իր հակառակորդները, Բալուցի Մանուէլ քահանայ, Սափրիչ Յովհաննէս՝ ինքնակենսազրուծիւնը: Սարգիս Երուսաղեմի նուիրահաւարութեան հաշիւը կը ներկայացընէ: Սարգսի աշակերտ Յարութիւն Պետանեան: Նալեան կը հրաժարի Պատրիարքութենէն եւ կը վախճանի: Սարգիս կը խօսի դամբանականը: 1771ին Սիմէոն Կաթողիկոս զՍարգիս կ'ուզէ նուիրակ անուանել: Սարգիս կը մերժէ. 29 Սեպտ. 1772ին Յովհ. Վ. նուրտինեանին հետ Պոլսէն կը մեկնի. 24 օրէն Մարսիլիա կը հասնի:

Քիչ մը կազգուրելէն ետեւ՝ սկսաւ այցելութիւն տալ ծանօթներուն: Նախ Յակոբ Պատրիարքին գնաց: Պատրիարքն յարտասուս փղձկեցաւ, ինչպէս բոլոր ներկաները. վասն զի Պատրիարքը բազկատարած ներողութիւն խընդրեց իր ըրածներուն. իսկ Սարգիս ներելով գրկեց եւ համբուրուեցան. Սարգիս չուզեց բնաւ աքսորանաց յիշատակութիւն ընել, այլ զուարթ խօսակցութեան մը փոխեց: Այնուհետեւ այցելութիւն տուաւ Աբրահամ Ամիրա Քուլէլեանի, որ Սարգսի սերտ բերեկամն էր եւ ազատութեան առաջին պատճառը, եւ որ յառաջ՝ եպարքոսի վաճառապետ Ղազարոսին եւ Պետրոսին հաշուրենկերն էր: Սարգիս անոր շնորհակալ եղաւ եւ մեծ պատուով ընդունուեցաւ: Յետոյ մի առ մի վարդապետաց եւ իշխանաց այցելութիւն տուաւ, եւ միշտ կը յորդորէր անցեալը մոռնալով՝ սիրով ապրիլ միասին. եւ ամէնքն ընծաներով եւ նուէրներով զինք մխիթարեցին: